ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/6-2

ք.Երևան 30 հունվարի 2018թ.

ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ. Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1000000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կնքվելիք համաձայնագրի հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2018թ. դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7	ք. Երևան, Մյասնիկյան 22/4
հ/հ 900013220026	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն	հ/հ 22008335012000
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 08417809
Վարչակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Վ. Հակոբյան	Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ 18/6-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխ. Բնութ.	Չափ. միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
5	50111130/309		դրամ	1000000	1	Մյասնիկյան 22/4	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչ 15.12.2018թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ՏՄ-1*, ՏՄ-2** ծառայությունների և ՏՄ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	չափաբաժին 5
	ԿԻԱ մակնիշի ավտոմեքենաներ
1 Բռնկման համակարգի ստուգում	10
2 Սառեցման համակարգի ստուգում	10
3 Յուղման համակարգի ստուգում	10
4 Արտացման համակարգի ստուգում	10
5 Կցորդման համակարգի ստուգում	10
6 ՓՏ-ի աշխատանքի ստուգում	10
7 ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	10
8 Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	10
9 Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	10
10 Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	10
11 Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	10
12 Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	10
13 ABS համակարգի ստուգում	10

14 Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	10
15 Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	10
16 Թափքի վիճակի ստուգում	10
17 Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	10
SU-2 ներառվող ծառայությունների անվանում	
18 Շարժիչի հանում և տեղադրում	30,000
19 Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	10
20 Նույնը կոնդիցիոների դեպքում	10
21 Նույնը ԱՓՏ-ի դեպքում	10
22 Շարժիչի վերանորոգում	40,000
23 Նույնը DOHC դեպքում	10
24 Նույնը V6-ի դեպքում	10
25 Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	3,000
26 Ռ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	3,000
27 Նույնը աջի համար (V6)	10
28 Նույնը ձախի համար (V6)	10
29 Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	20,000
30 Նույնը աջի համար (V6)	10
31 Նույնը ձախի համար (V6)	10
32 Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	3,000
33 Շարժիչի գլխիկի վերանորոգում	3,000
34 Փականի խցուկի փոխարինում	5,000
35 Նույնը V6-ի դեպքում	10
36 Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	8,000
37 Նույնը V6-ի ձախի դեպքում	10
38 Նույնը V6-ի աջի դեպքում	10
39 Նույնը DOHC դեպքում	10
40 Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	4,500
41 Հրիչների փոխարինում SOHC	10
42 Նույնը DOHC դեպքում	10
43 Ատամնավոր փոկի փոխարինում	20,000
44 Նույնը DOHC դեպքում	10
45 Նույնը V6-ի դեպքում	10
46 Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	4,000
47 Նույնը կոնդիցիոների դեպքում	10
48 Նույնը DOHC դեպքում	10
49 Նույնը կոնդիցիոների դեպքում	10
50 Նույնը V6-ի դեպքում	10
51 Նույնը կոնդիցիոների դեպքում	10
52 Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	5,000
53 Նույնը ԱՓՏ-ի դեպքում	10
54 Մխոցային օղակների փոխարինում	10,000
55 Նույնը DOHC դեպքում	10
56 Նույնը V6-ի դեպքում	10
57 Թափանիվի հանում և տեղադրում	1,000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
58 Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2,000

59 Յուղի պոմպի փոխարինում	2.000
60 Նույնը DOHC դեպքում	10
61 Նույնը V6-ի դեպքում	10
62 Ղեկավարման լոկի վերանորոգում	5.000
63 Բռնկման կարգավորում	1.000
64 CO կարգավորում	1.000
65 խարնարակի հանում և տեղադրում	10
66 Խարնարակի վերանորոգում	10
67 Օդի զտիչի փոխարինում	100
68 Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	1.000
69 Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	5.000
70 Բենզամղիչի փոխարինում	5.000
71 Վառելիքի զտիչի փոխարինում	3.000
72 Վառելիքի լաքի հանում և տեղադրում	10
73 Տրամլյորի հանում և տեղադրում	10
74 Տրամլյորի վերանորոգում	10
3. Սառեցման և արտածման համակարգ	
75 Հովհարի փոկի հանում և տեղադրում	1.000
76 Հովհարի հանում և տեղադրում	3.000
77 Ռադիատորի հանում և տեղադրում	3.000
78 Նույնը կոնդիցիոների դեպքում	10
79 Նույնը ԱՓՏ-ի դեպքում	10
80 Ռադիատորի վերանորոգում	20.000
81 Թերմոստատի փոխարինում	5.000
82 Ջրի պոմպի փոխարինում	7.000
83 Նույնը DOHC և V-6 դեպքում	10
84 Նույնը կոնդիցիոների դեպքում	10
85 Ջրի պոմպի վերանորոգում	10
86 Նույնը DOHC դեպքում	10
87 Նույնը կոնդիցիոների դեպքում	10
88 Ընդարձակող լաքի փոխարինում	500
89 Խլարարի հանում և տեղադրում	2.000
90 Նույնը DOHC դեպքում	10
91 Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	1.000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
92 Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	3.000
93 Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	10
94 Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	10.000
95 Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	10
96 Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	1.000
97 ՓՏ-ի հանում և տեղադրում	10.000
98 ՓՏ-ի վերանորոգում	20.000
99 ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	2.000
100 ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	2.000
101 Վազքաչափի շարժաբերի փոխարինում	2.000
102 ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	4.000
103 ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	4.000
104 Նույնը V6-ի համար	4.000
105 ԱՓՏ-ի հանում և տեղադրում	20.000
106 Նույնը V6-ի համար	4.000

107 ԱՓՏ-ի վերանորոգում	4,000
108 Նույնը V6-ի համար	4,000
109 ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	8,000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
110 Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	10
111 Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	10
112 Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	10
113 Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	10
114 Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	10
115 Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	10
116 Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում	10
6. Առջևի և հետևի կամրջակներ	
117 Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	10
118 Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար բանդում և հավաքում	10
119 Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի բանդում և հավաքում	10
120 Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադր	3,000
121 Կիսասռնու առանցքակալի փոխարինում	3,000
7. Կախոց	
122 Առջևի կախոցի լիակատար բանդում և հավաքում	1,000
123 Տրավերսի հանում և տեղադրում	1,000
124 Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	3,000
125 Անվակունդի առանցքակալի փոխարինում	3,000
126 Նույնը հետին տանող ա/մ-երի համար	10
127 Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	3,000
128 Նույնը հետին տանող ա/մ-երի համար	[redacted]
129 Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	1,000
130 Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	1,000
131 Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	1,000
132 Ձսպանակի հանում և տեղադրում	1,000
133 Ձսպակի հանում և տեղադրում	[redacted]
134 Ձսպակի վռանների փոխարինում	[redacted]
135 Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	3,000
136 Ներքևի լծակի հանում և տեղադրում	2,000
137 Ներքևի լծակի վռանների փոխարինում	4,000
138 Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	2,500
139 Միջին ձգանի հանում և տեղադրում	10
140 Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	10
141 Վերևի լծակի հանում և տեղադրում	10
142 Վերևի լծակի վռանների փոխարինում	10
143 Գնդե հոդակապերի փոխարինում	2,000
144 Ծայրակալների հանում և տեղադրում	2,000

145 Առջևի կայունարարի հանում և տեղադրում	1.000
146 Առջևի կայունարարի վռանների փոխարինում	2.000
147 Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	10
148 Հետևի զսպանակի փոխարինում	1.000
149 Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2,000
150 Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	10
151 Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	10
152 Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	3.000
153 Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	10
154 Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	10
155 Անվաբացքի կարգավորում	4.000
156 Զոդման աշխատանքներ 1 բաղադրամասի համար	5.000
8. Ղեկային մեխանիզմ	
157 Ղեկային կալունի հանում և տեղադրում	3.000
158 Նույնը V6-ի համար	10
159 Ղեկային կալունի վերանորոգում	8.000
160 ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	1.000
161 ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	2.000
162 Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	3.000
163 Նույնը DOHC դեպքում	10
164 Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	2.000
165 Նույնը DOHC դեպքում	10
166 Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	2.000
167 Նույնը DOHC դեպքում	10
168 Նույնը կոնդիցիոների դեպքում	10
169 ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	2.500
170 ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	6.000
9. Արգելակային համակարգ	
171 Գլխ. գլանի հանում և տեղադրում	3.000
172 Գլխ. գլանի վերանորոգում	10
173 Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	2.000
174 Բանվ. գլանի հանում և տեղադրում	2.000
175 Բանվ. գլանի վերանորոգում	10
176 Արգելակային համակարգի օդահանում	100
177 Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	1.000
178 Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	1.000
179 Առջևի սուպպորտի վերանորոգում	10
180 Հետևի սուպպորտի վերանորոգում	10
181 Արգելակային փողրակի փոխարինում	1.000
182 Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	3.000
183 Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	3.000
184 Հետևի կոճղակների փոխարինում	3.000
185 Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	3.000
186 Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	3.000
187 Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	10

188 ABS-ի հանում և տեղադրում	2,000
189 ABS-ի վերանորոգում	4,000
190 Ջեռքի արգելակի հոպանի հանում և տեղադրում	2,000
191 Ջեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	10
10. էլեկտրասարքավորում	
192 էլեկտրասարքավորման վերանորոգում	2,000
193 Չափիչ սարքերի հանում և տեղադրում	1,000
194 Գեներատորի հանում և տեղադրում	3,000
195 Նույնը V6-ի դեպքում	10
196 Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	10
197 Գեներատորի վերանորոգում	3,000
198 Մեկնարկիչի հանում և տեղադրում	3,000
199 Մեկնարկիչի վերանորոգում	3,000
200 Առջևի լապտերի հանում և տեղադրում	100
201 Հետևի լապտերի հանում և տեղադրում	1,000
202 Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	3,000
203 Վազքաչափի հանում և տեղադրում	1,000
204 Վազքաչափի հոպանի հանում և տեղադրում	10
205 Սաքերի պանելի հանում և տեղադրում	2,000
206 Արագաչափի հանում և տեղադրում	1,000
207 Ազդանշանի հանում և տեղադրում	10
208 Ապակեվացիչի շարժիչի հանում և տեղադրում	3,000
209 Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	2,000
210 Ազդանշային համակարգի տեղադրում	7,000
211 Մագնիտոլայի տեղադրում	1,000
212 Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1,000
213 էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	3,000
214 էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	3,000
215 էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	2,000
216 էլեկտրական տվիչների փոխարինում	1,000
217 էլեկտրական անջատիչների փոխարինում	1,000
218 Վառոցքի մոմերի փոխարինում	2,000
219 Կոնդիցիոների լիցքավորում	10,000
220 Կոնդիցիոների վերանորոգում	5,000
11. Այլ ծառայություններ	
221 Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում	3,000
222 Ավտոմեքենայի լվացում	3,000
223 Անիվի հանում և տեղադրում	1,000
224 Անվադողի վերանորոգում	1,000
225 Անիվի բալանսավորում	1,000
226 Անիվի վայց	5,000
227 CO-զոդման աշխատանքներ, գին 1 բաղ.սմ -ի համար	1,000
228 Խառատային աշխատանքներ	1,000
229 Փականագործի աշխատանքներ	1,000
230 Քարշարկի ծառայություն գին 1կմ. համար	500

Ընդամենը ծառայություններ	528,740
SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
1.Շարժիչ	
1 Շարժիչի բլոկ	20,000
2 Շարժիչի գլխիկ	20,000
3 Բարձիկ	20,000
4 Շարժիչի գլխիկի միջադիր	10,000
5 Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	10,000
6 Շարժիչի բաշխիչ լիսեռ	15,000
7 Շարժիչի փական դուրս մղող	5,000
8 Շարժիչի փական ներս մղող	5,000
9 Շարժիչի փականի խցուկ	1,000
10 Ծնկաձև լիսեռ	10,000
11 Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	5,000
12 Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	15,000
13 Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	25,000
14 Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	25,000
15 Հենակային տափողակ	10
16 Մխոց	6,000
17 Մխոցային օղակներ	14,000
18 Ատամնանիվ	12,000
19 Ատամնավոր փոկ	20,000
20 Շղթա	20,000
21 Հիդրոձգան	10
22 Հրիչ	10
23 Հիդրոհրիչ	5,000
24 Բաշմակ	2,000
25 Հանգստարար	2,000
26 Թափանիվ	1,000
27 Թափանիվի պսակ	3,000
28 Խցուկ բաշխիչ լիսեռի	5,000
29 Շկիվ	1,000
30 Շարժաթև	6,500
31 Կարտերի միջադիր	2,000
32 Միջադիր	1,000
2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
33 Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2,000
34 Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	3,500
35 Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	4,000
36 Յուղի զտիչ	4,000
37 Յուղի պոմպ	10,000
38 Յուղի պոմպի շարժաբեր	10
41 Յուղի ծորակ	10
42 Վառոցքի ծոմ	5,000
43 Բենզոբաք	1,000
44 Խառնարակ	10
45 Խառնարակի վերանորոգման հավաքածու	10

46 Ինժեկտորի ֆորսունկա	10.000
47 Վառելանյութի մղիչ էլեկտրական	15.000
48 Վառելանյութի մղիչ մեխանիկական	10
49 Վառելանյութի զտիչ	11.000
50 Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	10
51 Վառելանյութի փողրակ	1.500
52 Աքսելերատորի ճոպան	10
53 Օդի զտիչ	7.000
54 Ջերմաստիճանային տվիչ	2.000
55 Յուղի տվիչ	2.000
56 Բաշխիչ լիսեռի տվիչ	11.000
57 Օդի ծախսի տվիչ	5.000
58 Արագաչափի տվիչ	4.000
59 Հովհարի տվիչ	2.500
60 Ջրի տվիչ	2.500
61 Բենզոբաքի տվիչ	4.000
62 Մարման ընթացքի կարգավորիչ	1.000
63 Մարման ընթացքի տվիչ	1.000
64 Ղեկավարման համակարգիչ	1.000
65 Պարապ ընթացքի տվիչ	1.000
66 Դրոսելային փականի տվիչ	15.000
67 Թթվածնի տվիչ	35.000
3. Սառեցման և արտածման համակարգ	
68 Հովհարի փոկ	11.000
69 Հովհար	15.000
70 Ռադիատոր	50.000
71 Ընդարձակող բաք	5.000
72 Ռադիատորի փողրակ	2.000
73 Թերմոստատ	12.000
74 Ջրի պոմպ	20.000
75 Ջրի պոմպի առանցքակալ	10
76 Ջրի պոմպի թևակ	10
77 Սառեցման հեղուկ 1 լիտր	2.000
78 Ջրի պոմպի սռնանիվ	10
79 Հոլովակ	3.000
80 Փոկ	11.000
81 Փոկ կոնդիցիոների	10
82 Ծորակ	2.000
83 Խլարարի ներդիր	4.000
84 Խլարարի կախոց	4.000
85 Կրոնշտեյն	3.000
86 Անուր (խամուտ)	200
87 Խլարար	14.000
88 Ռեզոնատոր	10.000
89 Վառարանի ռադիատոր	25.000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
90 Կցորդման բանվորական գլան	5.000
91 Կցորդման գլխավոր գլան	6.000
92 Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	10
93 Կցորդման տանող սկավառակ	15.000
94 Կցորդման տարվող սկավառակ	7.000

95 Կցորդման առանցքակալ	3,500
96 Կցորդման փողրակ	2,000
97 Փոխանցման տուփ	10,000
98 ՓՏ-ի առջևի խցուկ	1,000
99 ՓՏ-ի հետևի խցուկ	1,000
100 ՓՏ-ի առանցքակալ	4,000
101 ՓՏ-ի առաջնային լիսեռ	13,200
102 ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	14,000
103 ՓՏ-ի եղանիկ	3,000
104 ՓՏ-ի ատամնանիվ	6,000
105 Համաժամիչ	3,000
106 Մուֆտ	7,000
107 ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1,000
108 ԱՓՏ-ի գտիչ	12,200
109 ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	1,000
110 ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	1,000
111 Տրանսմիսիոն յուղ, 1 լիտր	3,500
112 ԱՓՏ յուղ, 1 լիտր	5,000
113 ՓՏ-ի առաջնային լիսեռ	10
114 Հերմետիկ	2,000
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
115 Բաշխիչ տուփ	10
116 Բաշխիչ տուփի խցուկ	10
117 Բաշխիչ տուփի առանցքակալ	10
118 Բաշխիչ տուփի ատամնանիվ	10
119 Բաշխիչ տուփի լիսեռ	10
120 Կարդանային լիսեռ	10
121 Էլաստիկ մուֆտ	10
122 Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	10
123 Կարդանային լիսեռի խաչուկ	10
6. Առջևի և հետևի կամրջակներ	
124 Հետևի կամ առջևի կամրջակ	10
125 Ռեդուկտոր	10
126 Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	10
127 Դիֆֆերենցիալ	10
128 Դիֆֆերենցիալի սատելլիտ	10
129 Տանող ատամնանիվի խցուկ	1,000
130 Տանող ատամնանիվի առանցքակալ	1,000
131 Դիֆֆերենցիալի առանցքակալ	10,000
132 Կիսաառնի	1,000
133 Կիսաառնու առանցքակալ	1,000
134 Կիսաառնու միջադիր	1,000
135 Կիսաառնու խցուկ	1,000
136 Կարգավորիչ տափողակ	1,000
7. Կախոց	
137 Տրավերս	10
138 Կրոնշտեյն	500
139 Ձախ կամ աջ հոդակապ	45,000
140 Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	5,000
141 Անվակունդ	30,000
142 Անվակունդի խցուկ	3,000

143 Անվակունդի ներքին առանցքակալ	25,600
144 Անվակունդի արտաքին առանցքակալ	10
145 Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	10
146 Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	10
147 Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	1,000
148 Հարվածամեղմիչի թասակ	18,000
149 Ճնշանակ	1,000
150 Առջևի հարվածամեղմիչ	55,000
151 Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10
152 Հարվածամեղմիչի վռան	10
153 Ներքևի լծակ	5,000
154 Ներքևի լծակի վռան	6,800
155 Վերևի լծակ	10
156 Վերևի լծակի վռան	10
157 Գնդե հոդակապ	15,000
158 Առջևի կայունարար	1,000
159 Առջևի կայունարարի վռան	5,000
160 Առջևի կայունարարի առջևի վռան	10
161 Հետևի զսպանակ	1,000
162 Հետևի ցնցամեղմիչ	32,000
163 Հետևի մետաղածող (շտանգա)	10
164 Հետևի մետաղածողի (շտանգա) վռան	10
165 Հետևի անկյունագծային լծակ	10
166 Անկյունագծային լծակի վռան	1,000
167 Զսպակ (թեստորա)	10
168 Զսպակի վռան	10
169 Զսպակի միջադիր	10
170 Զսպակի բռնիչ	10
171 Աջ կամ ձախ ձգան	8,500
172 Ծայրակալ	8,000
173 Ձգան մեջտեղի	10
174 Անվահեծ	5,000
7. Ղեկային մեխանիզմ	
175 Ղեկային կալուն	40,000
176 Ղեկային կալունի առանցքակալ	1,000
177 Ղեկային կալունի խաչուկ	1,000
178 Հիդրոուժեղարար	5,000
179 Հիդրոուժեղարարի փոկ	10
180 Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	10
181 Հիդրոուժեղարարի պոմպ	10
182 Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	10
183 Ղեկային ծող	3,000
184 Ղեկային ծողի ծայրակալ	1,000
185 Հիդրոուժեղարարի յուղ. 1 լիտր	4,000
186 Ճոճանակ	10
187 Ճոճանակի վռան	1,000
8. Արգելակային համակարգ	
188 Գլխ. գլան	10,000
189 Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10
190 Վակուումային ուժեղարար	15,000

191 Բանվ. գլան	10
192 Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10
193 Արգելակային փողրակ	2.000
194 Սուպպորտի ուղղորդիչ	4.000
195 Սուպպորտի մանժետ	4.000
196 Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	24.000
197 Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	24.000
198 Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	24.000
199 Առջևի արգելակային սկավառակ	20.000
200 Հետևի արգելակային սկավառակ	20.000
201 Ձեռքի արգելակի ճոպան	5.000
202 ABS-ի տվիչ	5.000
203 Արգելակային հեղուկ. DOT-3 - 800գրամ	3.000
204 Արգելակային հեղուկ. DOT-4 - 800գրամ	1.500
205 Ձեռքի արգելակի ճոպան	10
9. էլեկտրասարքավորում	
206 Գեներատոր	50.000
207 Գեներատորի դիոդային կամրջակ	9.000
208 Գեներատորի ռելե	5.000
209 Գեներատորի առանցքակալ	2.000
210 Ստարտեր	35.000
211 Ստարտերի ռելե	2.000
212 Ստարտերի ածուխ	1.000
213 Բենդիքս	8.000
214 Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	9.000
215 Առջևի լապտեր	5.000
216 Առջևի թարթիչ	2.000
217 Հետևի լապտեր	2.000
218 Հետևի թարթիչ	2.000
219 Արգելակային լապտեր	2.000
220 Լամպ	1.000
221 Էլեկտրական անջատիչ	3.000
222 Էլեկտրական տվիչ	3.000
223 Էլեկտրական չափիչ սարք	1.000
224 Բենզինի կողպեք	5.000
225 Էլեկտրալարերի գլխավոր խուրց	5.000
226 Էլեկտրալարերի երկրորդային խուրց	3.000
227 Վառոցքային լարերի խուրց	5.000
228 Վառոցքի մոմի ծայրակալ	1.000
229 Վազքաչափ	3.000
230 Վազքաչափի ճոպան	3.000
231 Արագաչափ	3.000
232 Ազդանշան	2.200
233 Ապակեմաքրիչ	2.000
234 Ապակեմաքրիչի շարժիչ	4.000
235 Դռների կենտրոնական փական	3.000
236 Ազդանշային համակարգ	4.000
237 Մագնիտոլա	4.000
238 Էլեկտրամբարձիչ	4.000
239 Էլեկտրամբարձիչի շարժիչ	3.000

240 Ներկ. լուծիչ. օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	500

SU-1*- Տեխնիկական սպասարկում՝ գննում, դիագնոստիկա;

SU-2** - Տեխնիկական սպասարկում՝ վերանորոգում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար՝
Վ. Հասրաթյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ս-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Տնօրեն՝
Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/6 -2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	բանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/6-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

30.01.2018թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/6-2 տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 12 փետրվարի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն /այսուհետ՝ կոմիտե/,ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով 30.01.2018թ. կնքված տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/6-2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 4.2 և 7.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (Պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն Համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2018թ.-ի դեկտեմբերի 20-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ ԿԱԱԳԿՊԿ	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան,Մյասնիկյան 22/4
Հ/Հ 900013220026	«Ակբա-Կրեդիտ» Ագրիկոլ բանկ ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 22008335012000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 08417820
ՀՎՀՀ 02534328	
Աշխատակազմի ղեկավար՝ _____ Վ.Հասրաթյան	տնօրեն՝ _____ Վ.Բաղդասարյան
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ.	

Հավելված
30.01.2018թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԾՁԲ-18/6-2 պայմանագրի
թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ)

ՀՀ դրամ

հրավերով նախատես. չ/բ համարը	գնումների պլանով նախատես.միջանցիկ ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների. այդ թվում											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/309	ԿԻԱ մակնիշի ավտոմեքենաներ	90.0	180.0	270.0	360.0	450.0	540.0	630.0	720.0	810.0	900.0	1000.0	1000.0

Պատվիրատու

ՀՀ ԿԱԱԳԿՊԿ
Հասցե՝ ք.Երևան, Արշակունյաց 7
Հ/Հ 900013220026
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի ղեկավար _____ Վ. Հասրաթյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Կատարող

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան,Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ» Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ 22008335012000
ՀՎՀՀ 08417820

տնօրեն _____ Վ. Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.